

Քննարկվեց <Նոյ-Լենդ> ՓԲԸ դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 05.09.2012թ. թիվ 2116743 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ պետի 22.08.2012թ. թիվ 2116743 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Նոյ-Լենդ> ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 05.09.2012թ-ին կազմվել է թիվ 2116743 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 6.150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունում փաստացի աշխատանք իրականացնողների և գործող աշխատանքային պայմանագրերի համադրումից պարզվեց, որ թվով 10 (տասը) աշխատողների՝ Կարեն Պողոսյանի, Սվետլանա Զիրոյանի, Մարիետա Ղազարյանի, Սերգեյ Պողոսյանի, Արշակ Ալոյանի, Համայակ Դարբինյանի, Լարիսա Մելքոնյանի, Ալիկ Ազատյանի, Արսեն Մելքոնյանի և Վահե Բզնունիի աշխատանքի ընդունումը ձևակերպված չէր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացակայում էր գրավոր աշխատանքային պայմանագրերը: Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14 և 85 հոդվածների պահանջները: Համաձայն <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի <դ> ենթակետի, գործատուն տվյալ ամսում յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար հաշվարկում և վճարում է սոցվճար 60.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը գերազանցում է ինը՝ ընդամենը 6.000.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչներ Հայկ Զուլիակյանի, Արման Աբրահամյանի, Գնել Սարգսյանի և առաջին կարգի մասնագետ Արմեն Աբրահամյանի կողմից 24.08.2012թ. ժամը 17:40-ին Չկալովկա ափ. Տարածք հասցեում գտնվող <Նոյ-Լենդ> ՓԲԸ-ին պատկանող հանրային սննդի օբյեկտից կատարվեց հսկիչ գնում 1300 դրամի չափով՝ 2 հատ սուրճ, 2 հատ գարեջուր, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով՝ 2000 դրամ (ներառյալ թեյավճարը): Աշխատակիցը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 18:12-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 1210 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 18:13-ին մուտքագրվեց կատարված վճարման արժեքը՝ 1300 դրամ և ժամը 18:13-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 1300 դրամ:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

<Նոյ-Լենդ> ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

<Նոյ-Լենդ> ՓԲԸ-ին պատկանող ռեստորանային համալիրը սույն թվականի օգոստոս ամսին հանձնվել է շահագործման: Հարկային օրենսդրության համաձայն, սույն թվականի օգոստոսի 14-ին, որպես արտոնագրային վճար վճարվել է 136.500 դրամ 650 մ² հյուրանոցային տնտեսություն կազմակերպելու և 127.500 դրամ 100 մ² հանրային սնունդ կազմակերպելու համար (կան համապատասխան արտոնագրեր՝ տրված Սևանի ՏՀՏ կողմից), ինչպես նաև կազմվել է յոթ անձանց հետ աշխատանքային պայմանագիր:

Սույն թվականի օգոստոսի 22-ին Սևանի ՏՀՏ-ի ընթացիկ հսկողության բաժնի հարկային տեսուչները (այսուհետ՝ Ստուգումն իրականացնող անձինք) թիվ 2116743 հանձնարարագրի հիման վրա այցելել են ընկերությանը պատկանող ռեստորանային համալիր, գրանցել ռեստորանում գտնվող թվով 10 մարդկանց անունները, ազգանունները և կազմել են արձանագրություն, որպես չձևակերպված աշխատողների:

Արձանագրություն կազմելու հաջորդ օրը հարկային տեսուչները՝ առանց տնօրինությանը տեղյակ պահելու, նորից այցելում են ընկերություն՝ փորձելով ընկերության տնտեսվարից ստանալ պարզաբանումներ արձանագրված աշխատողների վերաբերյալ: Վերջինս պատասխանել է, որ նա տեղյակ չէ, թե արդյոք արձանագրված մարդիկ ունեն աշխատանքային պայմանագիր, թե ոչ, որովհետև այդ հարցն իր իրավասության սահմաններում չէ, և քանի որ այդ հարցերով զբաղվում է տնօրինությունը, առաջարկել է դիմել տնօրենին: Այնուհետև առանց տնօրենի հետ հանդիպելու և պարզաբանելու, փոստի միջոցով ընկերության հասցեով ուղարկվում է Ստուգումն իրականացնող անձանց կողմից կազմված ակտի նախագիծը, որից հետո նորից փոստի միջոցով ուղարկվում է ակտը, որտեղ նշվում է 10 չգրանցված աշխատողների անուն, ազգանուն: Այս ամենի մեջ անհասկանալի և վրդովվեցուցիչ է այն փաստը, որ արձանագրության մեջ նշված է, թե իբր այդ ամենը կատարվել է ընկերության տնօրենի մասնակցությամբ, այն դեպքում, երբ տնօրենն ընդհանրապես տեղեկացված չի եղել և չի գտնվել <Նոյ-Լենդ> ՓԲԸ-ի տարածքում:

Ինչ վերաբերում է չգրանցված 10 աշխատողներին, ապա հարկ է նշել, որ ընկերությունում չկան առանց աշխատանքային պայմանագրի աշխատողներ և ինչպես նշվեց վերևում, ընկերության բոլոր աշխատողները գրանցված են օրենքով սահմանված կարգով:

Ստուգումն իրականացնող անձինք առանց որևէ իրավական հիմքի, իբրև հայտնաբերել են 10 չգրանցված աշխատողներ, որը չի համապատասխանում իրականությանը և ենթակա է վերացման:

Ստուգումն իրականացնող անձինք խախտել են <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի (այսուհետ նաև Օրենք) 6-րդ հոդվածի պահանաջը, որի հետևանքով էլ կազմել են անօրինական ակտ: Մինչդեռ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի համաձայն՝ Ստուգումն իրականացնող անձինք պարտավոր են պահպանել ստուգման հետ առնչվող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 9-րդ հոդվածի պահանջով՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել 05.09.2012թ-ին կազմված թիվ 2116743 ակտը:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով <Նոյ-Լենդ> ՓԲԸ ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

<<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. <<Րամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգման սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, ...>>:

Վերոգրյալից հետևում է, որ հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը պետք է տրվի բացառապես տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Քննարկվող դեպքում ընկերությունում ստուգում իրականացնելու վերաբերյալ << ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ պետի 22.08.2012թ. թիվ 2116743 հանձնարարագիրը տրվել է ստուգման ընթացքում որպես ընկերության փոխտնօրեն հանդես եկած Դ.Մելքոնյանին, որն էլ ստորագրել է այն:

Ընկերության տնօրենի պնդմամբ Դ.Մելքոնյանն ընկերությունում զբաղեցնում է տնտեսվարի պաշտոնը, ինչի մասին ընկերության հրամանագրքում առկա է համապատասխան գրառում: Ընդ որում, ընկերության տնօրենի պնդմամբ, փոխտնօրենի պաշտոն երբևէ առկա չի եղել: Ընկերության տնօրենը նշեց նաև, որ ընկերությունում ստուգում կատարվելու վերաբերյալ տեղեկացել է միայն ստուգման ակտը ստանալիս:

Ընկերությունում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ ստուգման ընթացքում հնարավորություն չի ընձեռնվել ձեռք բերել համապատասխան ապացույցներ Դ.Մելքոնյանի՝ ընկերության փոխտնօրենը հանդիսանալու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում փաստն այն է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց Դ.Մելքոնյանի՝ ընկերության փոխտնօրենը (ղեկավարին փոխարինող պաշտոնատար անձը) հանդիսանալու վերաբերյալ:

Վերոգրյալից ըստ էության հետևում է, որ խախտվել են <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

<<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>>:

<< ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ թիվ 2116743 ստուգման ակտի նախագիծը կազմվել է 28.08.2012թ-ին, որը փոստային ծառայության միջոցով ընկերությանն է առաքվել 29.08.2012թ-ին: Որից հետո՝ 05.09.2012թ-ին կազմվել է ստուգման ակտը:

Քննարկվող դեպքում եթե նույնիսկ ընդունենք, որ ստուգման ակտի նախագծի առաքման հաջորդ օրը՝ 30.08.2012թ-ին ընկերությունը ստացել է այն, ապա անգամ այս դեպքում խախտվել է << օրենսդրությամբ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին) ակտի նախագիծը ուսումնասիրելու և առարկություններ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը: Մասնավորապես, <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը) 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Այսինքն, նշված ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվի առնվազն այն օրվանից, որ օրվանից, որ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը փաստացի ստացել է ակտի նախագիծը:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտը կազմվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<արկային ծառայության մասին>> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել << ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 05.09.2012թ. թիվ 2116743 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ